Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՍԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Լուսինե Աշոտի Գրիգորյան, Արսինե Սերգեյի Աղաջանյան, Լուսինե Նորայրի Գրիգորյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Լուսինե Աշոտի Գրիգորյան՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ

Արսինե Սերգեյի Աղաջանյան՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության կրթական ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ,

Լուսինե Նորայրի Գրիգորյան՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության ուսանողների աջակցության բաժնի գլխավոր մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Իտալիայի Հանրապետություն, քաղաք Բենևենտո, դեկտեմբեր 2-ից 7-ը, 2024թ.

4. *Հրավիրող կողմը.*

Սաննիոյի համալսարան

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Էրազմուս+ ՀԳ2» կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում «Հայաստանում և Մոլդովայում հանուն կանաչ և կայուն զարգացման բակալավրիատի կրթական ծրագրի բարեփոխում» (Reforming Undergraduate Education for Green and Sustainable Development in Armenia and Moldova (RE-GRAD)) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքային հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները.

- Սաննիոյի համալսարանում իրականացվող թվային կրթության փորձի ներկայացում՝ դասավանդման մեթոդաբանություն, թվային պաշարներ, գրադարան, էլեկտրոնային հարթակներ և այլն,
- Համալսարանում գործող լաբորատորիաների, ջրածնային նվազագույն էներգիայով աշխատող շինության ներկայացում,

- Թվային կրթության իրականացման՝ Ստրասբուրգի և Տրանսիլվանիայի համալսարարանների փորձի ներկայացում, մարտահրավերների ուսումնասիրություն, ուսուցման գործընթացում առաջացած խնդիրների վերհանում,
- Կայուն զարգացման՝ որպես տնտեսական աճի, կրթության, շարժունության և այլ ճյուղերի կարևոր ուղղության, բազմակի ինտելեկտի գափարի ներկայացում,
- Ծրագրով նախատեսված մասնագիտությունների որակավորումների ոլորտային շրջանակների ներկայացում հայկական գործընկերների՝ Երևանի պետական և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանների կողմից,
- Աշխատանքային փաթեթների ուսումնասիրություն, նախատեսված աշխատանքների ժամկետների հստակեցում,
- Նախատեսված աշխատանքների կատարման նպատակով հանդիպում և քննարկում ծրագրի համակարգողների հետ,
- Ընթացիկ այլ հարցեր:

7. <u>Հանդիպումները, ելույթները, այցելություններ.</u>

Աշխատաժողովի նպատակն էր կանաչ և կայուն զարգացման բակալավրիատի կրթական ծրագրի եվրոպական փորձի ուսումնասիրությունը:

Ներկայացվեց Բենևենտոյի Սաննիոյի համալսարանում իրականացվող թվային կրթության շրջանակներում դասավանդման մեթոդաբանությունը, թվային պաշարները, գրադարանը, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար էլեկտրոնային հարթակի՝ Moodle-ի առանձնահատկությունները:

Ստրասբուրգի և Տրանսիլվանիայի համալսարարանների ներկայացուցիչներն ամփոփեցին իրենց համալսարաններում թվային կրթության արդյունքները՝ անդրադառնալով կանաչ և կայուն կրթության բաղադրիչներին, կրթական մարտահրավերներին, ուսուցման գործընթացում առաջացած խնդիրներին և դրանց հաղթահարման իրենց միջոցներին:

Ծրագրով նախատեսված մասնագիտությունների որակավորումների ոլորտային շրջանակները ներկայացվեցին հայկական գործընկերների՝ Երևանի պետական և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանների կողմից:

Աշխատանքային հանդիպումների մի հատված կենտրոնացած էր էկոլոգիական խնդիրների վրա՝ թափոնների վերամշակում, կենսաբանությունը և սոցիոլոգիան կայուն զարգացման համատեքստում, 3D տեխնոլոգիաների օգտագործումը կառույցների չափման, գծագրման գործընթացում և այլն: Ներկայացվեց նաև բազմակի ինտելեկտի դերը կրթական համակարգում՝ որպես կայունության ապահովման միջոց:

Այցելություններ արվեցին համալսարանում գործող լաբորատորիաներ, ջրածնային նվազագույն էներգիայով աշխատող փորձարարական շինություն:

Կատարված աշխատանքների և ներկայացված փաթեթեների քննարկման նպատակով հանդիպում անցկացվեց ծրագիրի համակարգողների հետ, հստակեցվեցին առաջիկա վերջնաժամկետները, աշխատանքային փաթեթներով նախատեսված զեկույցների ներկայացման ամսաթվերը, նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքներն, ինչպես նաև ծրագրի շրջանակներում նախատեսվող այցերի հնարավոր ժամկետները:

8. *<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>*

Աշխատանքային այցի ընթացքում քննարկվեցին ծրագրի համաձայնագրով նախատեսված մասնագիտությունների որակավորումների ոլորտային շրջանակների մշակմանն ու հաստատմանն առնչվող հարցեր: Որոշվեց ՈՈՇ-ների նախագծերը ներկայացնել ծրագրի գործընկեր հանդիսացող կրթության որակի գնահատման կենտրոնին, այնուհետև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ քննարկել դրանց հաստատման հնարավորությունը:

9. *<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>*

2025 թվականի հունվարին նախատեսվում է ՈՈՇ-ների ներկայացում Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե: Հստակեցվեցին հաջորդ աշխատաժողովների ժամկետները և վայրը:

10. *<u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>*

Լուսինե Աշոտի Գրիգորյան
Արսինե Սերգեյի Աղաջանյան
Լուսինե Նորայրի Գրիգորյան

09.12.2024թ.